ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ WEB ԿԱՅՔԸ 7 ՏԱՐԻ ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ

Գ. Վահանյան՝ ՀՀ ՍԴ խորհրդական, իրավատեղեկատվական ծառայության ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Բլեյան՝ ՀՀ ՍԴ Տեղեկատվական և համակարգչային բաժնի պետ,
Մ. Անդրեասյան՝ ՀՀ ՍԴ համակարգող-ծրագրավորող

Տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը եւ զարգացումը Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է հասարակությանը, երկրին և աշխարհին ներկայանալու լավագույն միջոցներից մեկը:



Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ստեղծման առաջին իսկ օրից մեծ տեղ է հատկացրել իր գործունեությունում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը: 1997 թվականից Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը (աշխատակազմի ղեկավար՝ Ա.Հակոբյան) մշակել եւ տեղադրել է դատարանի Web կայքը Ինտերնետում (http://www.concourt.am), որը պարբերաբար նորացվում է:

Web կայքում ինֆորմացիան ներկայացվում է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն և ի ցույց է բերում Սահմանադրական դատարանի կառույցը, նրա ծավալած ամբողջ գործունեությունը և իր կողմից իրականացվող սահմանադրական վերահսկողությունը:

Կայքը պարունակում է նաև այլ լեզուներով հոդվածներ, փաստաթղթեր, որոնց դեպքում փաստաթղթի հոլման կողքին նշվում է այդ փաստաթղթի լեզուն:

Web կայքի բաժիններն են.

1. **Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը: The Constitution of RA. Конституция РА.**

Սահմանադրությունը որպես պետության կառույցի իրավական հիմք ներկայացվում է առաջին հերթին եւ ամբողջական բովանդակությամբ, որտեղ հեշտությամբ կարելի է անցումներ կատարել մի գլխից մյուսը եւ մի լեզվից մյուսը:

2. **ՀՀ օրենքը «Սահմանադրական դատարանի մասին»: The Law of RA on the Constitutional Court. Закон Республики Армения о Конституционном Суде.**

Այս բաժնում բերված է ՀՀ օրենքը սահմանադրական դատարանի մասին, ընդունված՝ Ազգային ժողովի կողմից 20 նոյեմբերի 1995թ. եւ 9 դեկտեմբերի 1997թ. տարբերակներով:

3. **Սահմանադրական դատարանի անդամները: The Members of the Constitutional Court. Члены Конституционного Суда.**

Այս բաժնում ամփոփված են սահմանադրական դատարանի ինը անդամների հակիրճ կենսագրությունները, իրենց լուսանկարներով, անձնական էլեկտրոնային հասցեներով, որոնցով կարելի է անմիջական կապ հաստատել տվյալ անդամի հետ:

4. **Սահմանադրական դատարանի որոշումները: The Decisions of Constitutional Court. Решения Конституционного Суда Республики Армения.**

Այս բաժնում սահմանադրական դատարանի ընդունած որոշումներն են նրա հիմնադրման օրվանից ի վեր: 2004 թվականի հունվարի 1-ի դրությամբ 464 որոշում: Որոշումները դասակարգված են հերթականությամբ, ըստ իրենց ընդունման տարեթվերի, ուստի դա հեշտացնում է այս կամ այն որոշման փնտրումն ու ընտրությունը: 1996թ.-ին ընդունվել է 33 որոշում (1-33), 1997թ.-ին՝ 42 որոշում (34-75), 1998թ.-ին՝ 74 որոշում (76-149), 1999թ.-ին՝ 55 որոշում (150-204), 2000թ.-ին՝ 69 որոշում (205-273), 2001թ.-ին՝ 71 որոշում (274-344), 2002թ.-ին՝ 61 որոշում (345-405), 2003թ.-ին՝ 59 որոշում (406-464):

5. էլեկտրոնային գրադարան: E-Library . Электронная библиотека.

Այս բաժնում ներկայացվում են սահմանադրական դատարանի անդամների եւ աշխատակազմի կողմից տպագրված գրքերի 36 էլեկտրոնային տարբերակները՝ 29-ը հայերեն, 5-ը ռուսերեն և 2-ը անգլերեն, այդ թվում "Սահմանադրական վերահսկողություն" (հայերեն և ռուսերեն) համեմատական վերլուծությունը և ուսումնական ձեռնարկը ԲՈՒՀ-երի ուսանողների համար, "Սահմանադրական վերահսկողությունը և նրա զարգացումը ժամանակակից աշխարհում" (անգլերեն), "Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր" (հայերեն), "Մարդու իրավունքներ" (հայերեն), "Ընտանեկան իրավունք" (հայերեն), "Կանանց և երեխաների իրավունքներ" (հայերեն), "Մարդու իրավունքների Եվրոպական դատարան" վճիռների ժողովածու (հայերեն), "Աշխատանքի և կրթության իրավունք" (հայերեն), "Սեփականության իրավունք" (հայերեն), "Սոցիալական իրավունք" (հայերեն), "Սպառողների իրավունք" (հայերեն): Այս բաժնից կա հղում նաեւ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի կողմից ռուսերեն լեզվով տպագրվող "Սահմանադրական արդարադատություն" երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի էլեկտրոնային բանբերի կայքի վրա, որտեղ կարելի է անմիջապես ծանոթանալ, պատճենահանել կամ պատվիրել բանբերի 21 համարները (1998-2003թթ.):



Բացի այդ կա նաեւ հղում "ՍԴ Գրադարան" բաժնի վրա, որտեղ տեղադրված են դատարանի գրադարանում առկա գրականության անվանացանկը այբբենական կարգով՝ հայերեն եւ ռուսերեն լեզուներով:

էլեկտրոնային գրադարանից կարելի է անցնել «Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում» 2002 և 2003 թվականներին հրատարակված Միջազգային ալմանախի էլեկտրոնային տարբերակների վրա: Ալմանախը (նախագծի ղեկավարն է ՀՀ ՍԴ նախագահ, իրավաբանության դոկտոր Գ.Հարությունյանը) ներառում է աշխարհի տարբեր երկրների սահմանադրական դատարանների եւ սահմանադրական իրավունքի կենտրոնների անդամների, ներկայացուցիչների, դատավորների հոդվածներ սահմանադրական իրավունքի արդի խնդիրների վերաբերյալ:



6. **Միջազգային կապեր: The International Relations. Международные связи.**

Միջազգային կապերի բաժնում հակիրճ ամփոփվում է սահմանադրական դատարանի միջազգային գործունեությունը սկսած 1998-ից մինչ այսօր,

հանդիպումներ, սեմինարներ, պաշտոնական եւ ոչ պաշտոնական այցեր, ընդհանուր 56 այց, որոնց թվում՝ "Ժողովրդավարություն իրավունքի միջոցով" Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների բազմակի այցերը, Վրաստանի սահմանադրական դատարանի պատվիրակության այցը, մարդու իրավունքների Մեքսիկայի Ազգային Կոմիտեի նախագահ, իսպանաամերիկյան երկրների օմբուդսմենի ֆեդերացիայի փոխնախագահ, Մեքսիկայի միջազգային իրավունքի ակադեմիայի անդամ, իրավաբանության դոկտոր տիկին Միռել Ռոկատտիի պաշտոնական այցը, Լեհաստանի Հանրապետութան սահմանադրական տրիբունալի նախագահ պրոֆ. Մարեկ Սաֆյանի և փոխնախագահ պրոֆ. Յանուշ Տժինսկու այցը, բազմաթիվ միջազգային կազմակերպութունների, ֆեդերացիաների, հյուպատոսական, տեղական իշխանական կամ ոչ իշխանական պատվիրակությունների այցեր:

7. Կոնֆերանսներ: Conferences. Конференции.



Այս բաժինը պարունակում է Եվրախորհրդի "Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով" Եվրոպական հանձնաժողովի, "Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս" միջազգային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի եւ Սահմանադրական իրավունքի կենտրոնի կողմից կազմակերպված միջազգային 10 կոնֆերանսների մասին տեղեկություններ, ծրագրեր, ելույթների և զեկույցների ժողովածուներ էլեկտրոնային տարբերակով, բազմաթիվ լուսանկարներ (1996-2003թթ.): Բաժնում տեղ են գտել նաև "Սահմանադրություն եւ իրավունք" ամենամյա հանրապետական 5 օլիմպիադաներին (1999-2003թթ.) առնչվող նյութեր: Ներկայացված են օլիմպիադայի մասնակիցների եւ ժյուրիի ցանկը, արդյունքները, վիրտուալ օրենքները, տեստերը և լուսանկարներ, որոնց օգնությամբ բազմաթիվ աշակերտներ և ուսանողներ տարբեր քաղաքներից ու մարզերից իրենց դպրոցներից և բուհերից, որտեղ կան Ինտերնետին միացված համակարգչային կենտրոններ, հեշտությամբ նախապատրաստվում են օլիմպիադային մասնակցելու համար:

8. Աշխարհի սահմանադրությունները: The World Wide Constitutions. Конституции мира.

"Աշխարհի սահմանադրությունները" բաժնում ներկայացված են 146 երկրների սահմանադրությունները (119 անգլերեն, 67 ռուսերեն, 20 իսպաներեն եւ 3 ֆրանսերեն), որոնք պարբերաբար նորացվում են: Սահմանադրությունները կարելի է որոնել ըստ երկրների այբբենական ցանկի կամ աշխարհի քարտեզից մկնիկի ստեղնի մեկ սեղմումով:

Համեմատական վերլուծությունը ավելի արդյունավետ դարձնելու համար սահմանադրությունները բաժանված են հինգ խմբի ըստ պետությունների կառավարման համակարգի՝ նախագահական, կիսանախագահական, խորհրդարանական, միապետական եւ այլ պետություններ: Դա թույլ է տալիս համեմատական վերլուծությունը կատարել ոչ միայն բոլոր սահմանադրությունների միջեւ, այլեւ իրար ավելի մոտ կառուցվածք ունեցող իշխանություններով պետությունների սահմանադրությունների միջեւ:



Կայքը ընդգրկում է նաեւ հիմնական սահմանադրական հասկացությունների հայ-ռուս-անգլերեն էլեկտրոնային բառարան (474 բառ եւ արտահայտություն):

Համակարգը (նախագծի ղեկավար՝ ՀՀ ՍԴ նախագահ, իրավաբանության դոկտոր Գ.Հարությունյան) գրանցված է Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում, վկայագիր N00227, 15.04.1998թ.:

9. Մարդու իրավունքների փաստաթղթեր: Human Rights Documents. Документы по правам человека.

«Մարդու իրավունքների փաստաթղթեր» համակարգը (ստեղծվել է 1998-2003թ.թ. HaykNet գիտական ուսումնական կենտրոնի և ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի աջակցությամբ) եռալեզու է /հայերեն, անգլերեն և ռուսերեն/, բաղկացած է 4 բաժիններից՝ Հայաստանի Հանրապետության փաստաթղթեր, միջազգային փաստաթղթեր, մարդու իրավունքների հիմնական հասկացությունների հայ-ռուս-անգլերեն բառարան (179 հասկացություն), ինչպես նաեւ Սահմանադրական Իրավունքի կենտրոնին նվիրված բաժին: Այս ծրագիրը հովանավորվել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի կրթության եւ մշակույթի բյուրոյի (BECA), Միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհրդի (Այրեքս) կողմից:

«ՀՀ փաստաթղթեր» բաժինը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից եւ մարդու իրավունքներին առնչվող ՀՀ օրենքներից. 130՝ հայերեն, 109՝ ռուսերեն եւ 4՝ անգլերեն, ՀՀ կողմից վավերացված 44 միջազգային փաստաթղթերի ցանկը, որոնցից 5-ը ամբողջական տեքստով տեղադրված են համակարգում: «Այլ ռեսուրսներ» ենթաբաժնում ընդգրկվել են մարդու իրավունքներին նվիրված հոդվածներ:

«Միջազգային փաստաթղթեր» բաժնում ներառված են հղումներ կայքերի վրա՝ ՄԱԿ-ի (http://www.un.org, http://www.unhchr.ch, որը պարունակում է ավելի քան 1300 անգլերեն լեզվով փաստաթղթեր), Ռուսաստանի մարդու իրավունքների կենտրոնի համակարգերի (http://www.hro.org) և մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (http://www.echr.coe.int): Բաժինը ընդգրկում է 120 մարդու իրավունքների միջազգային փաստաթղթեր, մարդու իրավունքի եվրոպական դատարանի 176 որոշումներ և 244 ԱՊՀ բազմակողմանի պայմանագրերի ցանկը:

10. Իրավական ռեսուրսներ: Legal Resources. Правовые ресурсы.

Այս բաժինը ներառելով ենթաբաժիններ պարունակում է հղումներ բազմաթիվ իրավական ռեսուրսների վրա.

- ազգային խորհրդարաններ, 65 հղում, որոնք դասավորված են այբբենական կարգով:

- սահմանադրական դատարաններ եւ հավասարազոր մարմիններ, 100 հղում:

- ազգային օրենսդրություններ, այբբենական կարգով, ընդհանուր հաշվով 200-ից ավել հղումներ տարբեր երկրների օրենսդրական մարմինների կայքերի վրա:

- այլ ռեսուրսներ՝ 142 հղում:

- երկու հղում Իրավունքի եւ Ինֆորմատիկայի Կենտրոնի ու քաղաքացիությանը վերաբերվող նախագծերի վրա, որոնք պատրաստվել են սահմանադրական դատարանի աշխատակիցների կողմից: "Քաղաքացիություն" կայքում կարող եք ծանոթանալ 43 երկրների քաղաքացիությանը վերաբերող օրենքներին կամ սահմանադրություններից առանձնացված դրույթներին: Պարզաբանվում են երկքաղաքացիությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ներկայացվում են բազմաթիվ միջազգային կոնվենցիաներ:



Նշված էլեկտրոնային ռեսուրսները, ինչպես նաև իրավական տեղեկութաև «Իրտեկ» շտեմարանը տեղադրված են դատարանի անդամների և աշխատակազմի համակրգիչներում, որը էապես հեշտացնում է այս կամ այն տեղեկությունը, փաստաթուղթը փնտրելու և մշակելու աշխատանքը:

ՀՀ սահմանադրական դատարանի կայքի ուսումնասիրությունը և օգտագործումը շատ օգտավետ կարող է լինել թե՛ դատավորներին, իրավաբաններին, ուսանողներին և թե՛ քաղաքացիներին, տալով լայն հնարավորություններ ավելի մանրամասն ծանոթանալու իրավական, մարդու իրավունքների սահմանադրական վերահսկողության իրականացման ծրագրերին և գործընթացին:

Աշխարհի բոլոր սահմանադրական դատարանների, Վենետիկի Հանձնաժողովի (www.venice.coe.int), Եվրոդատարանի (http://www.echr.coe.int), Սահմանադրական Իրավունքի Միջազգային Ասոցացիայի (www.iacl-aidc.org), Միջազգային Սահմանադրական Իրավունքի կայքերում կան հղումներ ՀՀ ՍԴ կայքի հասցեի վրա: Ամեն օր գրեթե 100-120 անգամ Ինտերնետի միջոցով Հայաստանից և արտասահմանից դիմում են կայքին և օգտվում փաստաթղթերից: ՍԴ կայքի հասցեն ներառվում է բազմաթիվ միջազգաին ամսագրերում, գրքերում, տեղեկագրքերում և բանբերներում:

Ք. Երևան, Բաղրամյան 10,
ՀՀ սահմանադրական դատարան,
Տեղեկատվական և համակարգչային բաժին
հեռ: 588-188
E-mail: gregor@concourt.am